

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 5-ի N 95 - Ա որոշման

2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 1540 ԲԱՆԱԶԵՎԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2004 թվականի ապրիլի 28-ին Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կանոնադրության 4-րդ գլխի համաձայն անվտանգության խորհրդի (ԱԽ) կողմից 4956-րդ հանդիպման ժամանակ միաձայն ընդունված ՄԱԿ ԱԽ 1540 բանաձևը նպատակաուղղված է հստակ քրեականացման միջոցով կանխարգելել և զսպել զանգվածային ոչնչացման զենքի, դրա փոխադրման միջոցների, նյութերի, սարքավորումների և տեխնոլոգիաների մշակումը, ձեռքբերումը, ապօրինի շրջանառությունը կամ օգտագործումը պետական և չարտոնված դերակատարներին և պետական և չարտոնված դերակատարներից:

Բանաձևի բացառիկությունը պայմանավորված է նրանով, որ վերջինս արծարծում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են համապարփակ ազգային արտահանման հսկողությունը և սահմանային վերահսկողությունը, կառավարության և արտադրողի միջև հարաբերությունները, միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների ներդրումն ազգային օրենսդրությունում,

ինչպես նաև ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցության անհրաժեշտությունը:

1540 կոմիտեն ստեղծվել է ՄԱԿ-ի անդամների շրջանում բանաձևի կիրարկմանն աջակցելու առաքելությամբ: Կոմիտեի մանդատը միաձայն երկարաձգվել է ՄԱԿ ԱԽ 1673 բանաձևի հիման վրա, որը նաև արձանագրեց ստանձնած պարտավորությունների հարգման գաղափարը: Կոմիտեի լիազորություններն այնուհետ երկարաձգվել են ՄԱԿ ԱԽ 1810 և 1977 (2012) բանաձևերով: Արդյունքում, 1540 կոմիտեի գործունեությունը երկարաձգվեց 10 տարով: Կոմիտեն բանաձևին միացած երկրներին պարտավորեցնում է պարբերաբար զեկույցներ ներկայացնել: Հայաստանի Հանրապետությունը, որպես 1540 բանաձևին միացած պետություն, գիտակցում է դրա կիրարկման միջազգային ջանքերը համակարգելու առումով 1540 կոմիտեի կենտրոնական դերը և հանձն է առնում

- չաջակցել չարտոնված դերակատարներին զարգացնել, տիրապետել, արտադրել, ունենալ, փոխադրել, փոխանցել կամ օգտագործել միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենքեր և դրանց փոխադրման միջոցներ,

- ընդունել և պարտադրել այնպիսի արդյունավետ օրենքներ, որոնք կարգելեն ցանկացած չարտոնված դերակատարի՝ հատկապես ահաբեկչական նպատակներով, արտադրել, տիրապետել, ունենալ, զարգացնել, փոխադրել, փոխանցել կամ օգտագործել միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենքեր և դրանց փոխադրման միջոցներ,

- համապատասխան և արդյունավետ միջոցներ իրականացնել միջուկային նյութերի հսկողության, հաշվառման և պաշտպանության (ֆիզիկական անվտանգություն) համար,

- վարել արդյունավետ սահմանային և համապարփակ ազգային արտահանման վերահսկում,

- օգտագործել համապատասխան վերահսկման ցանկ,

- միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները ներառել ՀՀ օրենսդրական ակտերում,

- համապատասխան միջոցներ ձեռնարկել աշխատելու համար արտադրողների և հասարակության հետ,

- ներգրավվել չտարածման շուրջ տարվող համագործակցության և երկխոսության մեջ,

- համագործակցային բնույթի գործողություններ իրականացնել կանխելու համար զանգվածային ոչնչացման զենքի բաղադրիչների ապօրինի շրջանառությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Հայաստանը մեծապես կարևորում է զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) չտարածման մասին բոլոր պայմանագրերի և ռեժիմների համապարփակ և արդյունավետ կատարումը: Առկա է ԶՈԶ տարածումը կանխարգելող իրավական ակտերի լայն շրջանակ՝ միաժամանակ միջազգային և ազգային մակարդակներում: ԶՈԶ տարածումը կանխարգելող իրավական համակարգի սյուներն են հանդիսանում՝

- «Միջուկային զենքը չտարածելու մասին» պայմանագիր՝ վավերացվել է 1993 թվականին,
- «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 1997 թվականի ապրիլի 29-ին,
- «Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր նյութեր պարունակող զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 1994 թվականի հունիսի 7-ին,
- «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 1993 թվականի սեպտեմբերի 23-ին: 2013 թվականի մարտի 18-ին Հայաստանը վավերացրել է կոնվենցիայի 2005 թվականի լրացումը,
- «Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին» պայմանագիր՝ ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսի 12-ին,
- «Միջուկային ահաբեկչական գործողությունների դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ին,
- «Միջուկային անվտանգության մասին» կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 1998 թվականի դեկտեմբերի 20-ին,
- «Ահաբեկչական ռմբահարումների դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 2004 թվականի ապրիլի 15-ին,
- Հաագայի վարքի կանոնակարգ՝ ստորագրվել է 2004 թվականին,
- «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիա՝ ուժի մեջ է մտել 2013 թվականի օգոստոսի 20-ին,
- Միջազգային առողջապահական կանոններ՝ ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 15-ին:

ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Հայաստանը դեռևս չի անդամակցում այնպիսի միջազգային վերահսկման ռեժիմների, ինչպիսիք են հրթիռային տեխնոլոգիաների վերահսկման ռեժիմը, միջուկային մատակարարների խումբը, Ցանգերի կոմիտեն և ավստրալիական խումբը: Այնուամենայնիվ, երկակի նշանակության ապրանքների արտահանման վերահսկման միջազգային չափանիշներին շարունակական մոտարկման արդյունքում, Հայաստանը 2012 թվականին պաշտոնապես դիմեց անդամակցելու Վասենաարի համաձայնությանը:

Մինևույն ժամանակ, արդեն մի քանի տարի է ինչ Վասենաարի համաձայնության ցանկը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 13-ի «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և սնհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 1308-Ն որոշման համար:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Միջուկային ոլորտ

1993 թվականից Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը (ԱԷՄԳ): Որպես խաղաղ նպատակներով միջուկային էներգիա օգտագործող երկիր՝ Հայաստանն ընդունում է այն կենտրոնական դերը, որը ԱԷՄԳ պետք է ունենա միջուկային զենքի չտարածման գործում և սերտորեն աշխատում է նշված կազմակերպության հետ:

Միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագրի հետ կապված Երաշխիքների կիրառման մասին համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջև ստորագրվել է 1993 թվականի սեպտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել 1994 թվականի մայիսի 5-ին: 1997 թվականի սեպտեմբերի 29-ին ստորագրվեց նաև կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 2004 թվականի հունիսի 28-ին: ԱԷՄԳ-ն իրականացնում է Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) միջուկային նյութերի շուրջօրյա վերահսկողությունը:

Վերջին տարիներին Հայկական ատոմային էլեկտրակայանի անվտանգության բարձրացման մի շարք միջոցառումներ են իրականացվել և շարունակում են իրականացվել Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպական միության և

Ատմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրերի շրջանակներում՝ հաշվի առնելով ԱԷՄԳ դիտարկման առաքելությունների և փորձագետների առաջարկությունները: ՀԱԷԿ-ի երկրորդ բլոկի անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների ընդհանուր արժեքը 1995 թվականից մինչև այսօր կազմել է 160 մլն ԱՄՆ-ի դոլար:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1231-Ն որոշմամբ հաստատվել են Հայկական ատոմային էլեկտրակայանի և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության ու պահպանության ուժեղացման հայեցակարգը և միջուկային տեղակայանքների ու միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության կանոնները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի նոյեմբերի 16-ի N 573 որոշմամբ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում միջուկային և ռադիացիոն անվտանգության պետական հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ատոմային էներգիայի օգտագործման միջուկային և ռադիացիոն անվտանգության պետական հսկողության վարչությունը: Ավելի ուշ, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով, վարչությունը վերակազմավորվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի:

Կոմիտեն համակարգում է ԱԷՄԳ-ի հետ տեխնիկական համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ազգային և տարածաշրջանային ծրագրերը, ինչպես նաև հանդիսանում է ԱԷՄԳ ռադիոակտիվ աղբյուրների անվտանգության և պահպանության վարքագծի կանոնների պատասխանատու մարմինը:

2013 թվականի մարտի 18-ին Հայաստանը վավերացրել է «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի 2005 թվականի լրացումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 13-ի N 985-Ա որոշման համաձայն 2005 թվականի հուլիսի 8-ին ստորագրված «Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխության մեջ ամրագրված պարտավորությունների իրականացման համար իրավասու մարմիններ են նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

2013 թվականի մարտի 21-ին Հայաստանը վավերացրել է «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2013 թվականի օգոստոսի 20-ին:

2013 թվականի սեպտեմբերի 30-ին մի շարք լրացումներ են կատարվել 1999 թվականի մարտի 25-ին ստորագրված «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքում: Օրենքը կարգավորում է միջուկային նյութերի պետական հաշվառման ու վերահսկման, ինչպես նաև Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն ներկայացվող հաշվետվությունների ու տեղեկությունների հետ կապված խնդիրները:

Ներկայումս, ռադիոակտիվ նյութերի ֆիզիկական պաշտպանությանը վերաբերող կառավարության որոշման նախագիծը գտնվում է մշակման փուլում, որը սահմանված կարգով հաստատվելուց հետո կկարգավորի ռադիոակտիվ նյութերի պետական գրանցման և վերահսկման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

Եվրամիության և Հայաստանի Հանրապետության միջև համագործակցության շրջանակներում իրագործվում է Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի կառավարման ռազմավարության զարգացման ծրագիրը: Ծրագիրը մեկնարկել է 2013 թվականի հոկտեմբերին և կավարտվի 2015 թվականին:

Քիմիական ոլորտ

«Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիան զանգվածային զենքի չտարածման և զինաթափման շրջանակի կարևոր բաղադրիչն է: Դրա դրույթների ամբողջական և լիակատար իրականացումը պետք է երաշխավորված լինի:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ, 2011 թվականի հոկտեմբերի 4-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետի ղեկավարությամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով (ազգային մարմին)՝ «Քիմիական զենքի մշակման, արտադրության, կուտակման, կիրառման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարման աշխատանքները կանոնակարգելու նպատակով:

2014 թվականի մայիսի 6-8-ը Հայաստանը հյուրընկալեց Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային խմբի երկրների 12-րդ տարածաշրջանային հանդիպումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի N 861-Ն որոշումը կարգավորում է Հայաստանի Հանրապետության քիմիական օբյեկտների վթարի կամ քիմիական վտանգի դեպքում բնակչության պաշտպանության պլանը և հաստատում է քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում վթարավերականգնողական գործողությունները: ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ին N 1179-Ն որոշման մեջ կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում տրվեց քիմիական զենքի, թունավոր քիմիկատների և դրանց պրեկուրսորների սահմանումը:

2013 թվականին Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է ներկայացրել «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Նշված օրենքի ընդունումը կարևոր է, քանի որ ներկայումս բացակայում է քիմիական նյութերի անվտանգ օգտագործումն ապահովող իրավական հիմքը: Նոր օրենքը կսահմանի քիմիական նյութերի դասակարգումը, դրանց պետական գրանցումը, օրինական հիմք կստեղծի քիմիական նյութերի անվտանգ փոխանցման համար՝ պաշտպանելու համար մարդու կյանքը և առողջությունը, սպառողների շահերը, պահպանելու համար շրջակա միջավայրը, կենդանական և բուսական աշխարհը քիմիական նյութերից առաջացող վտանգներից:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տվյալների համաձայն վերահսկվող քիմիական նյութերի ապօրինի շրջանառության, ներմուծման, արտահանման կամ վերաարտահանման դեպքեր չեն գրանցվել:

Խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանում իրականացվել է լայնածավալ քիմիական արտադրություն, հանձինս՝ «Նաիրիտ» և Կիրովականի (ներկա Վանաձոր) քիմիական գործարանների:

Քիմիական օբյեկտների ֆիզիկական պաշտպանության, քիմիական թափոնների կառավարման, փոխադրման պահանջների ապահովման նպատակով կառավարության մի շարք որոշումներ են ընդունվել:

Կենսաբանական ոլորտ

Հայաստանը մեծապես կարևորում է «Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր նյութեր պարունակող զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիայի հետագա ամրապնդումը և դրա դրոյթների ամբողջական

իրագործումը՝ այն որակելով որպես զանգվածային ոչնչացման զենքի չտարածման նպատակների կենսական գործիք:

Հայաստանում կոնվենցիայի դրույթներն իրականացվում են համապատասխան օրենսդրության ընդունմամբ: Որպես Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ, այդ գործողությունները համաձայնեցվում են միջազգային առողջապահական կանոնների հետ:

Առկա խնդիրներն են մասնագիտացված լաբորատորիաների, լաբորատոր հետազոտությունների միասնական մեթոդոլոգիաների, պարտադիր հետազոտությունների ստանդարտների և լաբորատոր ցանցի բացակայությունը: Հայաստանն ունի չհամակարգված լաբորատոր համակարգ՝ մասնավոր և հանրային առողջապահական լաբորատորիաներ, որոնք դեռ ընդգրկված չեն ընդհանուր ցանցում: Նպատակն է համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման ճանապարհով զարգացնել և ամրապնդել լաբորատոր կարողությունները:

Միջազգային առողջապահական կանոնների պահանջների կատարումը շարունակական գործընթաց է և պահանջում է անընդմեջ գործողությունների իրականացում: Հայաստանի Հանրապետությունը միջազգային առողջապահական կանոններով նախատեսված բոլոր կարողությունները ձևավորել է՝ բացառությամբ լաբորատոր կարողությունների, որի ձևավորման նպատակով երկամյա երկարաձգում էր խնդրել ԱՀԿ-ից: Ներկայումս նպատակային գործունեություն է ծավալվում միջազգային պահանջներին համապատասխան համընդհանուր լաբորատոր ցանց ստեղծելու, ռեֆերանս լաբորատոր կենտրոնը հազեցնելու և ցանցի ներսում համագործակցության մեխանիզմները ձևավորելու ուղղությամբ:

ԱՄՆ-ի պաշտպանության դեպարտամենտի Սպառնալիքների նվազեցման գործակալության կենսաբանական ոլորտում ներգրավման համագործակցային ծրագրի շրջանակներում, Ատլանտայի հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանային գրասենյակի հետ համագործակցությամբ, աջակցում է Հայաստանի Հանրապետությանը հիմնելու համընդհանուր լաբորատոր ցանց՝ միջազգային պահանջներին համապատասխան լաբորատոր կարողություններով:

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-Ն որոշումը սահմանում է վարակիչ հիվանդությունների կանխարգելման և հաղթահարման նպատակով 2012-2016 թվականների համար իրականացվելիք ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը:

«Մանրէաբանական (կենսաբանական) և թունավոր նյութեր պարունակող զենքի մշակման, արտադրության և կուտակման արգելման և դրա ոչնչացման մասին» կոնվենցիայի 6-րդ վերանայման համաժողովի կողմից 2006 թվականին ընդունված որոշման համաձայն 2014 թվա-

կանի ապրիլին Հայաստանը ՄԱԿ-ի Զինաթափման հարցերով գրասենյակի ժնևյան մասնաճյուղի՝ կոնվենցիայի կատարման աջակցման բաժնին է ներկայացրել փոխվստահության ամրապնդման միջոցները:

Արդահանման վերահսկում

ՄԱԿ ԱԽ 1540 բանաձևի ընդունումից հետո Հայաստանի Հանրապետությունը ամբողջովին վերանայել է իր օրենսդրությունը և գործառնությունները երկակի և ռազմական նշանակության ապրանքների արտահանման վերահսկման, զանգվածային ոչնչացման զենքի չտարածման և սահմանային հսկողության ոլորտում:

2009 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահը ստորագրել է «Պետական տուրքի մասին», «Լիցենզավորման մասին», «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում լրացումներ կատարելու մասին օրենքներ: Համապատասխան փոփոխություններ են արվել նաև քրեական օրենսգրքում:

2010 թվականի մայիսի 15-ին ուժի մեջ է մտել «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքը: Ապրանքների շրջանառության վերահսկումը նպատակաուղղված է պաշտպանելու Հայաստանի ազգային անվտանգության շահերը և ապահովելու պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը: Վերահսկվող ապրանքների և ոչ նյութական արժեքների ցանկը վերցվել է Եվրամիության համապատասխան ցանկից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 1-ի N 924-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը հանդիսանում է երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմինը: ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1785-Ն որոշումը հաստատում է Հայաստանից արտահանվող և Հայաստանի տարածքով տարանցիկ փոխադրվող երկակի նշանակության՝ հսկվող ապրանքների, ինչպես նաև փոխանցվող երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների՝ հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը: Ցանկը նորացվել է Կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 438-Ն որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի N 1308-Ն որոշումը հաստատում է ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման, առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգը: Որոշման համաձայն ռազմական նշանակության արտադրանքի արտահանման և ներմուծման լիցենզավորման մարմինը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն է: Յուրաքանչյուր գործարքի համար լրացուցիչ արտոնություն է հարկավոր: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիրքորոշումը նախապայման է: Ցանկը թարմացվում է ամեն տարի՝ համաձայն Վասենասարի համաձայնության ցանկի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի N 1308-Ն որոշման մեջ համապատասխան լրացումներ կատարելու միջոցով:

Սահմանային վերահսկողություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 553-Ն որոշման համաձայն կարգավորող վերահսկողությունից դուրս մնացած ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման և վնասագերծման գործընթացում հիմնական պատասխանատու մարմիններն են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն:

Բոլոր ընդունված օրենքների և օրենսդրական ակտերի արդյունավետ կատարման նպատակով 2010 թվականի նոյեմբերի 5-ին ստեղծվեց մշտական գործող սահմանային և մաքսային վերահսկման օպերատիվ խումբ, որը բաղկացած է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան աշխատողներից: Խումբն իրավասու է իրականացնել կրկնակի ստուգում, զննում և վերահսկողություն՝ կանխելու համար ռազմական և երկակի նշանակության ապրանքների անօրինական արտահանումը, ներմուծումը, տարանցիկ փոխադրումը Հայաստանի Հանրապետության տարածքով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի N 482-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ապահովմանն ուղղված 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1418-Ն որոշմամբ պետական սահմանի «Զվարթնոց» և «Բագրատաշեն» անցման կետերին վերապահվել է միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների պահանջներին համապատասխան կենսաբանական, քիմիական և ճառագայթային վտանգների դիմակայման հիմնական կարողություններ ապահովող պետական սահմանի անցման կետերի կենտրոնական դերակատարությունը:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության կառավարության մեկ այլ՝ 2012 թվականի հունիսի 22-ի N 777-Ն որոշմամբ, սահմանի նշանակված անցման կետերում ներդրվել են միջազգային առողջապահական կանոններ և արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների ծրագիր:

ԵՐԿԿՈՂՄ, ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հենասյուներից մեկը միշտ եղել է չտարածման միջազգային ռեժիմների անդամ երկրների հետ համագործակցության ամրապնդումը:

1998 թվականի հունիսի 30-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Արգենտինայի Հանրապետության կառավարության միջև ստորագրվեց «Միջուկային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 1999 թվականի ապրիլի 22-ին:

2000 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև ստորագրվեց «Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 2001 թվականի հունվարի 10-ին:

2000 թվականի հուլիսի 24-ին Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև ստորագրվեց «Զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը: Այս համաձայնագրի ստորագրումը հնարավորություն ընձեռեց հետագայում Կենսաբանական

վտանգների նվազեցման ծրագրի շուրջ երկկողմ համագործակցություն իրականացնելու համար: Արդյունքում, Կենսաբանական վտանգների նվազեցման ծրագրի շրջանակներում, 2010 թվականի սեպտեմբերին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության դեպարտամենտի միջև ստորագրվեց «Կենսաբանական զենքերի ստեղծման մեջ օգտագործվելիք տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածման կանխարգելման ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիր: Այս համաձայնագրի շրջանակներում, Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության և Հայաստանի Հանրապետության կառավարության համատեղ ջանքերով Հայաստանում իրականացվում է կենսաբանական ոլորտում ներգրավման համագործակցային ծրագիր: Ծրագրի առանցքային կետերն են կենսաբանական անվտանգությունը և կենսաբանական ապահովությունը: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում ավելի արդյունավետ կատարել «Կենսաբանական զենքի մասին» կոնվենցիայի դրույթները և իրականացնել Առողջապահության համաշխարհային կազմակերպության միջազգային առողջապահական կանոնների պահանջները:

Հայաստանը նաև ներգրավված է Ամերիկայի Միացյալ Նահանգների Արտահանման վերահսկման և սահմանային վերահսկողության ծրագրում, որը նպատակաուղղված է հայկական սահմանապահների և մաքսային ծառայության աշխատողների՝ զանգվածային ոչնչացման զենքի և երկակի նշանակության ապրանքների փոխադրման բնագավառում հմտությունների բարձրացմանը:

2006 թվականի մարտի 24-ին Հայաստանը հայտարարել է, որ ողջունում և ամբողջովին սատարում է զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարում անվտանգությանն ուղղված ամերիկյան նախաձեռնությունը և 2003 թվականի սեպտեմբերի 4-ին ընդունված արգելման սկզբունքների մասին հայտարարությանը:

2007 թվականին Հայաստանը միացել է 2006 թվականին սկզբնավորված միջուկային ահաբեկչության դեմ պայքարի ռուս-ամերիկյան համաշխարհային նախաձեռնությանը և ակտիվորեն մասնակցում է նախաձեռնության շրջանակներում իրականացվող միջոցառումներին:

2008 թվականի հուլիսի 14-ին Վաշինգտոնում ստորագրվեց Համատեղ գործողությունների ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև միջուկային և ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի ոլորտում: Այս համատեղ գործողությունների ծրագրի

համաձայն երկու կողմերը համագործակցում են միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումները կանխելու, հայտնաբերելու, այդպիսի միջադեպերին արձագանքելու Հայաստանի Հանրապետության հզորությունները մեծացնելու ուղղությամբ թվով վեց առաջնահերթ գործողությունների իրականացման միջոցով, որոնք ներառում են ճառագայթային աղբյուրներին վերաբերող մեկ ծրագիր, սահմանային պաշտպանության մակարդակի բարձրացմանն ուղղված մեկ ծրագիր, միջուկային մաքսանենգությանը վերաբերող օրենսդրական դաշտի բարելավման երկու ծրագիր և կոռուպցիայի դեմ պայքարին աջակցող մեկ ծրագիր:

2014 թվականի ապրիլին Հայաստանում տեղի ունեցավ Համատեղ գործողությունների ծրագրի 3-րդ վերանայման հանդիպումը:

2012 թվականի մայիսի 22-ին Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև ստորագրվեց իրականացման համաձայնագիր Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության միջև սահմանային անվտանգության ոլորտում օժանդակության և զանգվածային ոչնչացման զենքերի տարածման կանխարգելման ուղղությամբ համագործակցության վերաբերյալ:

Հայաստանը մասնակցել է 2010 թվականի Վաշինգտոնի, 2012 թվականի Սեուլի և 2014 թվականի Հաագայի միջուկային անվտանգության գագաթնաժողովներին:

Հայկական կողմը նաև ակտիվ համագործակցում է վրացի գործընկերների հետ, մասնավորապես, միջուկային մաքսանենգության կանխարգելման ոլորտում: Համատեղ արձագանքման կարողություններն ամրապնդելու և զարգացնելու նպատակով պարբերաբար դաշտային վարժանքներ են անցկացվում հայ-վրացական սահմանի անցման կետերում, ինչպես նաև կանաչ սահմանում, երկաթուղային փոխադրման ուղիներում, որի վերջնակետն է Վրաստանի Բաթումի նավահանգիստը:

Բոլոր գործող ծրագրերն արտացոլում են Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած պարտավորություններն ու առաջնայնությունները:

ՄԱԿ ԱԽ 1540 քանաձևի առավել արդյունավետ և համապարփակ իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունը կգարգացնի և կօգտագործի համագործակցության բոլոր հնարավոր շրջանակները: Ըստ այդմ, կշարունակվի և կխորացվի սերտ փոխգործակցությունը ԱԷՄԳ-ի հետ: Հայաստանը նաև իր ակտիվ մասնակցությունն ու ներդրումը կունենա 1540 կոմիտեի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության աշխատանքներում, Միջուկային անվտանգության գագաթնաժողովների գործընթացում, այնպիսի

շրջանակներում, ինչպիսիք են՝ Միջուկային ահաբեկչության դեմ պայքարի համաշխարհային նախաձեռնությունը, Եվրամիության «Բիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային գերազանցության կենտրոններ» նախաձեռնությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Կրթության և արտահանման վերահսկման դաշնային գրասենյակը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության հետ համագործակցությունը կշարունակի մնալ ԶՈԶ-ի հայրնաբերման, կանխարգելման և արձագանքման ոլորտում կարողությունների ամրապնդման և դասընթացների կազմակերպման հիմնական բաղադրիչը:

1. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԶԵՆՔ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼԻՔ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| Ծրագրավորված միջոցները | Պատասխանատու պետական մարմինները | Արդյունքը | Ժամանակացույցը | Պահանջվող աջակցությունը |
|---|--|--|----------------------|-------------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Ա Ր Տ Ա Հ Ա Ն Մ Ա Ն Վ Ե Ր Ա Հ Ս Կ Ո Մ | | | | |
| Արտահանման վերահսկման ոլորտում ազգային օրենսդրության վերլուծություն և վերանայում (սորացում)՝ առաջադեմ ազգային փորձի և ժամանակակից միջազգային պահանջների համաձայն | | | | |
| <p>1. ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի ներմուծման կամ Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման լիցենզավորման կարգը, լիցենզիայի և հայտի ձևերը հաստատելու մասին» N 1790-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարել</p> | <p>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p> | <p>Համապատասխանեցում ԱԷՄԳ-ի անվտանգության նոր չափանիշների պահանջներին</p> | <p>2014-2015 թթ.</p> | |
| <p>2. Մշակել և ընդունել միջնորդական գործունեությունը կարգավորող իրավական փաստաթուղթ</p> | <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p> | <p>ՄԱԿ ԱԽ 1540 (2004) բանաձևի դրույթներին համապատասխան միջնորդական գործունեության վերահսկում ներառող վերանայված օրենսդրության առկայություն</p> | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|--|--|---|----------------------|---|
| <p>3. ՀՀ կառավարության 2003 թ. սեպտեմբերի 11-ի «Հայկական ատոմային էլեկտրակայանի և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության ու պահպանության ուժեղացման հայեցակարգը և միջուկային տեղակայանքների ու միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության կանոնները հաստատելու մասին» N 1231-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում</p> | <p>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p> | <p>1. Միջուկային նյութերի անվտանգության ապահովում 2. Օբյեկտի ֆիզիկական պաշտպանության պլանի ներդրում</p> | <p>2014-2015 թթ.</p> | |
| <p>4. «Ռադիոակտիվ նյութերի ֆիզիկական պաշտպանության կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում</p> | <p>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p> | <p>Համապատասխանեցում ԱԷՄԳ-ի անվտանգության նոր չափանիշների պահանջներին</p> | <p>2014-2015թթ.</p> | |
| <p>5. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև համագործակցության համաձայնագրի նախագիծ՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի «Ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման և վնասազերծման կարգը հաստատելու մասին» N 553-Ն որոշման կետերի արդյունավետ կատարման նպատակով</p> | <p>ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե ՀՀ ֆինանսների նախարարություն</p> | <p>Միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացում</p> | <p>2014-2015թթ.</p> | |
| <p>6. TRACKER8 էլեկտրոնային համակարգի հիմնում</p> | <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> | <p>Արտահանման վերահսկման համակարգի բարելավում և դյուրացում</p> | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|--|--|---|---|---|
